«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ *«Սովորողների մեջ լեզվական գրագիտության կարողունակության զարգացումը հայոց լեզվի դասերին»*

Առարկան՝ *Հայոց լեզու և գրականություն*

Հեղինակ՝ *Գայանե Սարգսյան*

Մարզ՝ *Շիրակ*

Ուսումնական հաստատություն՝ *Կապսի միջնակարգ դպրոց*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 5

Հետազոտություններ <Գոյականական անդամի լրացումներ> թեմայի ուսուցման հետ կապված, որոնք զարգացնում են սովորողի մոտ լեզվական գրագիտության կարողունակություն 6

ՈՐՈՇԻՉ 10

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ 13

ԴԱՍԻ ՊԼԱՆ 14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 17

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից կրթական համակարգում անհրաժեշտություն է առաջանում նորովի մատուցում հանդես բերել լեզվի ուսուցման մեթոդաբանության նկատմամբ: Նոր տեխնոլոգիաների և համացանցի օգտագործումը զգալիորեն ընդլայնում է ուսումնական նյութի որոնման, հաղորդման և յուրացման հնարավորությունները:

Հայոց լեզվի դասընթացը դպրոցում առաջին հերթին նպատակ ունի առաջնային լեզվական գիտելիքների հաղորդման , ինչպես նաև լեզվական գրագիտության կարողունակության զարգացմանը:

Ըստ նոր չափորոշչի շատ կարևոր է , որ հայոց լեզվի դասաժամի ընթացքում պայմաններ ստեղծել, որ սովորողը տիրապետի իր մայրենի լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվի:

Ակտիվ խոսքը հնարավորություն է տալիս , որ սովորողն ավելի արագ զարգացնի իր կապակցված խոսքը:

Հետազոտական աշխատանքի նպատակը բացահայտել սովորողների մեջ լեզվական գրագիտություն կարողունակություններին նպաստող արդյունավետ մեթոդները , միջոցներն ու ուղիները:

Հետազոտության խնդիրները՝

1. Ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը:
2. Կիրառել լեզվական գրագիտություն կարողունակության զարգացմանը նպաստող արդյունավետ մեթոդներ:
3. Գտնել կարողունակության զարգացմանը նպաստող ուսուցման լավագույն տարբերակներ:

Ներկայումս ուսուցչին վերապահվող կարևորագույն խնդիրներից մեկը կրթության բովանդակության կազմակերպումն է: Այդ գործընթացում ուսուցիչը մի շարք այլ գործոնների հետ պետք է հաշվի առնի նյութի մատուցումը: Մատուցման նպատակադրումը պետք է լինի

աշակերտակենտրոն, այսինքն՝ նպատակը պետք է լինի գիտելիքների, հմտությունների, վերլուծական մտածողության և այլ որակների զարգացումը, ոչ թե սոսկ տեղեկատվություն հաղորդելը։

Սույն հետազոտական աշխատանքի թեման է՝ «*«Սովորողների մեջ լեզվական գրագիտության կարողունակության զարգացումը հայոց լեզվի դասերին»*»: Թեման արդիական է այն առումով, որ սովորողները հասարակական կյանքում հաճախ հանդիպում են լեզվական սխալների և լեզվական կանոնների խաթարումների, որոնք վերաբերում են նախադասության անդամների անհամաձայնությանը, սխալ խնդրառությանը, խոսքի տրամաբանական և սխալ կառուցվածքին, նախադասությունների անդամների սխալ շարադասությանը, տրոհվող անդամների ոչ ճիշտ կետադրությանը, դրանց արտաբերական հնչերանգային սխալներին և այլն։

Աշխատանքի նպատակն է զարգացնել հաղորդակցական հմտություններ, տեսնել նախադասության գլխավոր և երկրորդական անդամների շարադասության ոճական հնարավորությունները, խոսքում կիրառել դրանք։ Զարգացնել ճանաչողական որակներ՝ ընկալել նախադասության երկրորդական անդամները որպես ճշգրտող, բացահայտող, բնութագրող միավորներ։

Վերջինս հետապնդում է հետևյալ խնդիրները.

- հասնել այն բանին,որ աշակերտը կարողանա տարբերակել

որոշիչը հատկացուցչից

- տեքստի վրա տարվող գործնական աշխատանքի միջոցով

ամրապնդել գայականական անդամի լրացումների մասին ունեցած գիտելիքները

տարբեր բնույթի տեքստերի շարահյուսական վերլուծության միջոցով

գայականական անդամի լրացումների մասին ունեցած գիտելիքները վերածել

հմտության

- վերացնել աշակերտների բանավոր խոսքում հաճախ հնչող սխալները,

ինչպես նաև ճիշտ կետադրել գրավոր խոսքը

Գրական ակնարկ

Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

Լեզվական գրագիտություն և կարողունակություն. սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով և այլ օտար լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Նրանք կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Ընդհանուր գրագիտությունը կազմում է սովորելու և լեզվական 3 հաղորդակցության հիմքը, որի հիման վրա կարող են ձևավորվել գրագիտության մյուս ձևերը (քաղաքացիական, բնապահպանական, տնտեսական, ֆինանսական, իրավական, առողջապահական, գիտատեխնիկական, թվային և այլն): Սովորողներն ընդունակ են բանավոր և գրավոր ձևերով ճանաչել, ըմբռնել, արտահայտել, ստեղծել և մեկնաբանել տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաներին և իրավիճակներին առնչվող տեսողական, ձայնային և թվային նյութեր:

Հետազոտություններ <Գոյականական անդամի լրացումներ> թեմայի ուսուցման հետ կապված, որոնք զարգացնում են սովորողի մոտ լեզվական գրագիտության կարողունակություն

Հայոց լեզվի ուսուցման գործընթացում «Շարահյուսության» ուսուցումը սկսվում է 8-րդ դասարանից, որի հիմնական նպատակն է պատրաստել գրագետ, հաղորդակցվող, տրամաբանված բանավոր և գրավոր խոսք ունեցող անհատ, որն իր սեփական ջանքերով հասնում և բացահայտում է գիտելիքը: Հայոց լեզվի ծրագրային նյութի ուսուցմանը զուգընթաց կարևորվում է հանրակրթության պետական չափորոշիչով նախանշված կարողունակությունների զարգացման համադրումը:

Շարահյուսություն բաժնից 8-րդ դասարանում անցնում ենք «Գոյականական անդամի լրացումներ» թեման, որի միջոցով կներկայացնեմ սովորողների մեջ լեզվական գրագիտություն կարողունակության զարգացումը:

«Գոյականական անդամի լրացումներ» թեմայի ուսուցման գործընթացում շեշտադրվում է սովորողների որոնողական, հետազոտական աշխատանքները և նրանց ինքնուրույն խթանումը:

Համր բնագրերի, տեքստային աշխատանքների կողքին աշակերտներին առաջադրվում են խմբագրական ստեղծագործական բնույթի աշխատանքներ՝ քերականական գիտելիքների կիրառումով:

Հայոց լեզվի ուսուցման դասընթացում կարևորվում է նաև կապակցված գրագետ խոսքի զարգացումը: Բնագրերի վրա կատարվող լեզվաոճական վերլուծությունների ժամանակ, երբ աշակերտն զգում է բառի տեղին գործածության անհրաժեշտությունը, երբ բացում է բառի գեղագիտական արժեքը, իմաստային նրբերանգներն ու պատկերավոր արտահայտչականությունը, ձևավորվում են բանավոր և գրավոր խոսքի կառուցելու կարողությունները:

Հետազոտական աշխատանքն անցկացնում եմ 8-րդ դասարանում «Գոյականական անդամի լրացումներ» թեմայից: Նախապես անդրադարձ եմ կատարում նախադասության անդամների կատարած դերի և նշանակության մասին:

Վերհիշում ենք նախադասության երկրորդական անդամների շարահյուսական դերը:

Երկրորդական անդամները բաժանելով երկու խմբի առաջարկում եմ մի խմբին լրացնել գոյական անդամի լրացումները՝ որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, իսկ մյուս խմբին բայական անդամի լրացումները՝ խնդիրներ, պարագաներ:

Ամփոփելով հին նյութը նախապատրաստում եմ նոր դասի մուտքը՝ «Որոշիչ»:

Հարցադրումների միջոցով առանձնացնում ենք հատկանշային իմաստ արտահայտող խոսքի մասերը՝ ածականը, թվականը, սրանց հարաբերակից դերանունները: Ընդ որում դրանք որոշչի պաշտոն են կատարում հիմնականում իրենց բուն նշանակությամբ, առանց փոփոխության: Մյուս խոսքի մասերը որոշիչ կարող են դառնալ միայն ինքնանվանողական արժեքով գործածելիս: Որոշիչ են դառնում նաև դերբայները /անորոշ, հարակատար, ենթակայական/ մակբայները, գոյականը՝ նման, պես, կապերի հետ, ինչպես նաև բառակապակցությունները:

Գրատախտակին փակցնում եմ գծապատկերը և գրում օրինակները: Աշակերտները ինքնուրույն լրացնում են գծապատկերը:

Տալիս եմ ինքնուրույն աշխատանք գեղարվեստական գրականությունից դուրս գրել որոշիչ լրացումներ՝ օրինակ բերելով Բակունցի ստեղծագործությունները:

Գոյականական անդամի լրացումների ուսուցման գործընթացում շեշտադրվում է սովորողների որոնողական, հետազոտական աշխատանքերը և նրանց ինքնուրույնության խթանումը:

Համր բնագրերի, տեքստային աշխատանքների կողքին աշակերտների առաջադրվում են խմբագրական ստեղծագործական բնույթի աշխատանքներ՝ քերականական գիտելիքների կիրառումով:

Որոշիչները Բակունցի ստեղծագործություններում վկայում են նրա խոսքի հուզականության, զգացմունքի առատության և գեղեցկության մասին, որոնք նրա ստեղծագործությունները դարձնում են ճոխ, գեղեցիկ, գունագեղ մի կտավ: Հարկ է նշել,

որ Բակունցի արձակում որոշիչները մեծամասամբ մակդիրներ են, որոնք պատկերավոր են դարձնում խոսքը։

Հայտնի է, որ բոլոր մակդիրները որոշիչներ են, իսկ ամեն որոշիչ չէ, որ մակդիր է: «Մակդիրը լեզվի պատկերավորման միջոց է, այլաբերության տեսակ, ոճական այնպիսի հնարանք,որի միջոցով տրվում է առարկայի, երևույթի, երբեմն նաև գործողության ոչ թե հիմնական ու բնորոշ, տրամաբանական տարբերակիչ հատկանիշը, այլև նրա գեղարվեստական, պատկերավոր, գեղագիտական բնութագրությունը»: Սրանց հիմնական հատկությունն այն է, որ ունեն փոխաբերական իմաստ: Մակդիրների պատկերավորությունն ու ուժգնությունը հաճախ պայմանավորվում են նրանց անսպասելի կիրառությամբ:[5]

Օրինակ՝

- Այգում <u>երիտասարդ</u> կեռասենիները մրսում էին։
- Հնձած արտերի վրա իջել էր պայծառ տխրություն։

Նախադասությունը, իբրև լեզվական միավոր, կազմված է լինում մեկ կամ մի քանի բառերից, որոնք, որոշակի կապի ու հարաբերության մեջ մտնելով, ձևավորում են այն և վերածվում նախադասության անդամների կամ միավորների: Սակայն նախադասության կազմում հանդես եկող ամեն բառ դեռևս նախադասության անդամ չէ: Նախադասության անդամի համար կարևոր է նրա՝ շարահյուսական ինքնուրույն պաշտոն կատարելը: Ըստ Ս. Աբրահամյանի՝ նախադասություն կազմող այն բառերն ու բառակապակցությունները, որոնք շարահյուսական ինքնուրույն պաշտոն են կատարում, կոչվում են նախադասության անդամներ:[1]

Նախադասության ձևավորման գործում բոլոր անդամները միատեսակ դեր ու նշանակություն չունեն: Որոշ անդամներ էական դեր են կատարում մյուսների համեմատությամբ, այդ պատճառով նրանց առկայությունը պարտադիր և անհրաժեշտ է նախադասության ձևավորման գործում:

Լեզվի շարահյուսական մակարդակի հիմնական առանցքը պարզ նախադասությունն է՝ իր գլխավոր ու երկրորդական անդամներով և մեկ ստորոգումով: Այսինքն՝նախադասությունը կազմվում է բառերով ու բառակապակցություններով, իսկ բառերը ձևաբանական մակարդակի

միավորներ են՝ խոսքի մասերը, որոնք նախադասության մեջ արդեն դառնում են անդամներ՝ ենթակա, ստորոգյալ, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ և բայական անդամի լրացումներ՝ խնդիրներ ու պարագաներ:

Շարահյուսական մակարդակում նախադասության անդամները բաժանվում են երկու խմբի՝

ա/ գլխավոր,

բ/ երկրորդական:

Գլխավորները նախադասության ստորոգումային անդամներն են՝ ենթական ու ստորոգյալը:

Գոյականական անդամի լրացումների ուսուցման գործընթացում կիրառվում են մի շարք ժամանակակից մեթոդներ, ինչպիսիք են Т-աձև, М-աձև աղյուսակ, հինգ բոպեանոց շարադրանք, մտագրոհ, Վենի դիագրամ, ԳՈՒՍ և այլն:

ՈՐՈՇԻՉ

Որոշիչը նախադասության՝ գոյականով կամ գոյականաբար առնված այլ խոսքի մասով արտահայտված որևէ անդամի որակական, քանակական, վիճակային կամ նման հատկանիշներ արտահայտող անդամն է: Նա պատասխանում է ինչպիսի՞, որպիսի՞, ո՞ր, որքա՞ն, ինչքա՞ն, ո՞րերորդ, քանի՞երորդ, իսկ բացառական և գործիական հոլովով դրված որոշիչները պատասխանում են ինչի՞ց, ինչո՞վ հարցերին:

Որոշիչ ունեցող անդամը կոչվում է որոշյալ: Որոշչի պաշտոնով ամենից առաջ հանդես են գալիս հատկանշային իմաստ արտահայտող խոսքի մասերը՝ ածականը, թվականը, սրանց հարաբերակից դերանունները: Ընդ որում, դրանք որոշչի պաշտոն են կատարում հիմնականում իրենց բուն նշանակությամբ, առանց փոփոխության:

Մյուս խոսքի մասերը որոշիչ կարող են դառնալ միայն ինքնանվանողական արժեքով գործածվելիս: Որոշիչ դառնում են նաև դերբայները(անորոշ, հարակատար, ենթակայական), մակբայները,գոյականը՝ նման, պես կապերի հետ, ինչպես նաև բառակապակցությունները:

Որոշչի արտահայտությունը



- Առավոտյան ծովը բրոնզե հալոցքի պես տարուբեր էր լինում:
- Սիմինդրի երկաթ տերևները թրերի նման քսվում էին իրար:
- Առաջին ձիավորը աչքը պարիսպներից չէր հեռացնում:
- Կաքավաբերդի քարափով բարձրանում էին երեք ձիավոր:
- Դռան մոտ զրնգացին Սոնայի շալե շապիկի արծաթ սուրմաները:
- Ծովափին սև թավիշե գլխարկով կինը հովանոցի ծայրով ավազի վրա նշաններ էր անում:

- Կուշտ կերած մեր ձիերը արագ քայլերով բարձրանում էին:

Գրագետ խոսք կառուցելու համար շատ կարևոր է որոշչի և որոշալի շարադասությունը:

Որոշիչները որոշյալի նկատմամբ կարող են լինել նախադաս և վերջադաս: Վերջադասի դեպքում շարադասությունը կոչվում է շրջուն: Ի տարբերություն սովորական շարադասության, որի դեպքում ենթական դրվում է ստորոգյալից առաջ, լրացումը՝ լրացյալից, շրջուն շարադասության դեպքում ստորոգյալը գործածվում է ենթակայից առաջ, իսկ լրացումները, այդ թվում և որոշիչը, դրվում են լրացյալներից հետո: Այս երևույթը ոճական առումով ավելի ինքնատիպ, հետաքրքիր ու բազմազան է դարձնում գրողի ոճը: «...Շրջուն շարադասությունը ասացվածքը բանաստեղծական է դարձնում, խոսքին եռանդ և հաստատուն, ազնիվ ընթացք է տալիս այն ժամանակ, երբ գործ է ածվում հարմար, տեղին և բնականորեն, լեզվի ոգու համեմատ, թե չէ անբնական շեղումները լեզուն միայն երկդիմի, մութն են դարձնում և զրկում սովորական խոսքի կենդանությունից ու կորովից»:[6]

Նախադաս դիրքում որոշիչը չի տրոհվում: Վերջադաս որոշիչը որոշյալից բաժանվում է բութով, իսկ նախադասության մյուս անդամներից՝ ստորակետով: Այն չի տրոհվում, եթե արտահայտված է մեկ բառով: Տրոհվում են նաև համասեռ որոշիչները.

Համասեռ	Անհամասեռ
մեղմ, բարի հայացք	չափազանց խիստ
մաքուր, ջինջ երկինք	մարդ բրդյա նուրբ
նուրբ, քնքուշ ծաղիկ	գործվածք այդպիսի
քաղցր, համեղ թեյ	քնքուշ աղջիկ նստած
	առաջին մարդը

Բերենք տրոհվող վերջադաս որոշչի օրինակներ.

- Կային հազար գույնի ձիեր՝ որձ, էգ, ծանրած և ծեր։
- Մի կապտավուն ձի՝ երկար, ծալեծալ բաշով, բոլոռվին մերկ, կատաղած վազում էր հրապարակով։

Որոշիչը որոշյալի հետ կապակցվում է առդրությամբ՝ անկախ որոշյալի ձևից, որոշիչը միշտ մնում է անփոփոխ։

Որոշիչ թեմայի ուսուցման ավարտին կարելի է հանձնարարել ստեղծագործական բնույթի տարբեր առաջադրանքներ, որոնց դեպքում աշակերտը կկարողանա կիրառել իր անցած քերականական գիտելիքները՝

- ✔ տեքստում գտնել որոշիչները, դրանք փոխարինել հոմանիշներով
- ✔ տեքստից դուրս գրել որոշիչները և որոշել դրանց խոսքիմասային պատկանելությունը
- ✔ տեքստում գտնել հետադաս որոշիչները և կետադրել
- ✔ կազմել նախադասություններ մակդիր-որոշիչներով։

Աշակերտը կիմանա՝

- ✔ որոշիչ-որոշյալի տեղը նախադասության մեջ, շաադասությունը և կետադրությունը
- ✔ որոշչի արտահայտությունը
- ✔ որոշչի մակդիրային դերը նախադասության մեջ
- ✔ բազմակի կամ ծավալուն հետադաս որոշիչների կետադրությունը։

Հայոց լեզվի ուսումնասիրության արդյունքում ձևավորվում է հայեցի լեզվամտածողություն, որն արտահայտվում է հայերենով բանավոր և գրավոր գրագետ խոսք կառուցելու, տեքստ ստեղծելու կարողությունների դրսևորմամբ։

Շատ կարևոր են նաև ակնկալվող վերջնարդյունքները.

- ✓Կարդալ և գրել ուղղախոսական կանոններին համապատասխան
- ✓Հարգալից վերաբերմունք դրսևորել մայրենի լեզվի հանդեպ ճիշտ և գրագետ գործածել։
- ✓Գնահատել մայրենի լեզուն՝ որպես ազգապահպանության, ազգային լեզվամտածողության, մշակութային արժեքների փոխանցման, ինքնաճանաչման կարևոր գործոն։

Հետազոտական մաս

Թեմայի ուսուման ժամանակ օգտագործում եմ հետևյալ մեթոդ-հնարները՝

1. Մտածիր, զույգվիր, քննարկվիր
2. Մտագրոհ
3. Լրացնել գծակարգը
4. Երկսուն աղյուսակող արտահայտել որոշիչը և մակդիր որոշիչը
5. Որոշել սյունակներում տրված որոշիչների տարբերությունը և բացատրել։
6. 5 րոպեանոց շարադրանք

Ստորև կտեղադրեմ նաև նշված մեթոդ- հնարների էլեկտրոնային տարբերակները, որոն օգտությամբ ևս փորձում եմ ապահովել սովորողների մոտիվացիան նյութի նկատմամբ։

Դասի պլան

Դասարան՝ VIII
Առարկա՝ հայոց լեզու, ինֆորմատիկա
Դասի թեման՝ գոյականական անդամի լրացում, որոշիչ, տեքստային խմբագրիչ, ինֆորմացիայի ներմուծումը համակարգչային ցուցադրումներում
Դասի նպատակը՝

1. կիմանա՝

որոշչի արտահայտությունը
կապակցման տեսակը
որոշչի մակդիրային դերը նախադասության մեջ
որոշչի շարադասությունը, կետադրությունը
աշխատել MSOffice փաթեթի ծրագրերի օբյեկտների հետ

2. կկարողանա՝

տեքստում գտնել որոշիչները՝ փոխարինելով հոմանիշներով
ստանալ բառակապակցություններ՝ տրված բառերին ավելացնելով որոշիչներ
տեքստում գտնել հետադաս որոշիչները և կետադրել
կազմել նախադասություններ մակդիր-որոշիչներով
ներմուծել ինֆորմացիա առկա գրաֆիկական օբյեկտներում :

3. կհմտանա՝

գրագետ տեքստեր ներմուծելու և համակարգչային ծրագրեր կիրառելու մեջ:

Մեթոդները՝ <<Բազմանիստ>>, <<Խթանող հարցեր>>, <<Մտածի՛ր, զույգվի՛ր, քննարկի՛ր>>, <<Վենի դիագրամ>>, <<5-րոպեանոց շարադրանք>>, <<Երկսյուն աղյուսակ>>:
Ուսումնական նյութերը՝ դասագիրք, տետրեր, համակարգիչներ, գրատախտակ, պրոյեկտոր
Դասի ընթացքը՝ Կազմակերպական պահ:
Տնային առաջադրանքի ստուգում, վերլուծում:
2. Կատարել կից ներկայացված պրեզենատցիայում ներկայացված առաջադրանքները:
3. Տնային աշխատանքի հանձնարարում:

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄ՝ՈՐՈՇԻՉ

Հատկորոշիչ թեստ

1. Տրված հատվածի մեջ ընդգծել որոշիչները։

Հին ժամանակներում ապրում էր մի ասպետ՝գեղեցիկ ու բարի։Նրա ձիու սմբակները չէին պղտորում աղբյուրների

ադամանդը,չէին տրորում ճանապարհի քնքուշ,նուրբ ծաղիկները երփներանգ։

Մի օր էլ բարձրաբերձ լեռների գոգում շողշողուն մի լճակ նկատեց։Նրա վճիտ ու ողորկ հայելու մեջ տեսավ չքնաղ աղջկա լուսեղեն դեմքը։Լուսնկա գիշերների պես մեղմանուշ աչքերով աղջիկը նստած էր մարմարյա պատշգամբում։

2. Տրված բառերի հետ գործածել հատկանիշ արտահայտող 2-ական բառ.

ա) անտառ _____

բ) նկարիչ _____

3. Հետևյալ բառերով 2-ական բառակապակցություն կազմել.

ա)զվարթ _____

բ)անաչառ _____

4. Նախադասությունները լրացնել որոշիչներով։

ա) Պատանին լսում էր նրա _____ երգերը։

բ) _____ իշխանը մերժել էր կռվել կայսրության թշնամիների դեմ։

5. Հետևյալ բառերի 2-ական հոմանիշ գրել.

ա) կապույտ _____

բ) քաջ _____

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գոյական անդամի լրացումները իրենց կարևոր և առանձնահատուկ տեղն ունեն նախադասության երկրորդական անդամների շարքում: Նրանց ուսուցումը , յուրացումը պահանջում են բարդ ու հետևողական աշխատանք: Պետք է իրականացնել համակարգված ուսուցում որոշչի, հատկացուցչի, բացահայտչի կետադրությունը, շարադասությունը ուսուցանելու համար: Գոյականական անդամի լրացումների յուրացումը կօգնի ճիշտ ներկայացնել ասելիքը, հարստացնել բառապաշարը, խուսափել տարածված սխալներից:

Քերականական այս նյութի ուսուցումը (Գոյականական անդամի լրացումներ) հետապնդում է կարևորագույն նպատակ.

- ✔ սովորողների բանավոր և գրավոր խոսքի զարգացումը, որը իրականանում է սովոողների գործուն մասնակցության ապահովման ճանապարհով
- ✔ ապահովում է նրանց ճանաչողական, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական կարողությունների ձևավորումը, զարգացումը և ամրապնդումը

Արդյունավետ ուսուցման երաշխիքներից մեկն էլ յուրաքանչյուր դասին համապատասխան նյութի յուացումը բոլոր աշակերտների համար ապահովելն է: Շատ կարևոր է այն, որ աշակերտները նյութը յուրացնեն ոչ միայն լսելով, դիտելով, մտապահելով, անգիր վերարտադրելով, այլև մասնակցելով, մտածելով, հաղորդակցվելով, հարցնելով: Աշակերտը պասիվ լսողից պետք է դառնա գործընթացի ակտիվ մասնակիցը: Չպետք է մոռանալ հայտնի ասացվածքը. «Ես լսում եմ և մոռանում, ես տեսնում եմ և հիշում, ես կատարում եմ և սովորում»:

Հետազոտության թեմայի ուսուցման արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է ուսուցման ակտիվ մեթոդների կիրառությունը, ինչը նպաստում է աշակերտների գործուն մասնակցությանը լեզվաքերականական նյութի յուրացմանը: Զարգանում են սովորողի լեզվամտածողությունը, ստեղծագործական կարողությունը և կապակցված խոսք կազմելու ունակությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1969
2. Արտ. Պապոյան, Խ. Բադիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003
3. Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Ե., 2003
4. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965
5. Ն. Տողանյան, Թ. Թովմասյան, Լ. Գրիգորյան, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2012
6. Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բադիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Ե.,1976
7. Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն,Պարզ նախադասություն,Ե.,1986
8. Ակսել Բակունց, Պատմվածքներ, Երևան, 1969
9. Վիքիպեդիա https://hy.wikipedia.org/

4. Վենի դիագրամով բնութագրել համառոտ և ընդարձակ նախադասությունները:



5.Խթանող հարցեր

- Ի՞նչ է լրացումը:
- Քանի՞ տեսակ են լինում լրացումները:
- Նշել լրացման տեսակների տարբերանիշ հատկանիշները:

6.Գոյականական անդամի լրացում որոշիչ

<<Մտածի՛ր, զույգվի՛ր, քննարկի՛ր>>

I շարք

Ի՞նչ ենք կամենում հայտնաբերել կամ ապացուցել այս թեմայի մասին:

II շարք

Որտե՞ղ և ինչպե՞ս ենք մտադիր գտնել պատասխանները:

III շարք

Ի՞նչ չափանիշներով կգնահատենք մեր աշխատանքի արդյունքները:

7. Մտագրոհ

ա)

բ) Գրել որոշիչ-որոշյալ կապակցություններ

ընդգծել որոշիչները,
որոշել կապակցումը, շարադասությունը, արտահայտությունը,
ի՞նչ հարցերի է պատասխանում

21

8. Լրացնել գծակարգը բառակապակցություններով՝ որոշչի համապատասխան արտահայտությամբ:



21

9. Երկայուն աղյուսակով արտահայտել որոշիչը և մակդիր-որոշիչը:

Որոշիչ	Մակդիր-որոշիչ

Հիշել՝ կայուն մակդիրներ են դարձել՝ կեռ հոնքեր, չինարի բոյ, ծով աչքեր, աղի արցունք:

10. Որոշել այնակներում տրված որոշիչների տարբերությունը և բացատրել:

համասեռ որոշիչներ	տարասեռ որոշիչներ
Մեղմ, բարի հայացք ուրախ, զվարթ տրամադրություն խոժոռ, մռայլ դեմք գեղեցիկ, առինքնող դիմագծեր	Որդիական ջերմ սեր չխոսող փոքրիկ երեխա սարերից իջնող հորդառատ առու հաղթական ուրախ շքերթ

12. 5-րոպեանոց շարադրանք:

Տրված բառերը՝ որպես որոշիչներ, օգտագործել շարադրանքի մեջ.

առատաբուխ, կանաչազարդ, մետքասե, քչքչան, հեզաճկուն, տաք:

13. Անդրադարձ

- Ո՞ր առաջադրանքն էր բարդ:
- Ի՞նչը կարող էինք ավելի լավ անել, սակայն չկարողացանք:
- Արդյոք նյութը գիտակցորե՞ն յուրացրինք:
- Քննարկման ենթակա որևէ բան կա՞:
- Հետաքրքի՞ր աշխատանք էր, եթե այո՝ ինչու՞, եթե ոչ՝ ինչու՞: